

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈՔԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

08.03.2024



Միրելի՛ հայուհիներ

Ընդունե՛ք իմ անկեղծ շնորհավորանքը ձեզ նվիրված գարնանային տոնի կապակցությամբ:

Բոլորիդ, որ այդքան բարի եք, գեղեցիկ ու հոգատար, մաղթում եմ տոնական տրամադրություն, երջանկություն, բարեկեցություն և մեր ժամանակներում ամենակարևորը՝ խաղաղություն. թո՛ղ որ ձեր կյանքը լեցուն լինի միայն գեղեցիկ ու պայծառ իրադարձություններով:

Թո՛ղ այս հրաշալի տոնի հետ գարունն այցելի բոլորիդ սրտերին ու հոգիներին ու ձեր ամենաթանկ մարդկանց ուշադրության շնորհիվ հարատև լինի: Շնորհակալ ու երախտապարտ ենք ձեզ իմաստնության ու անսպառ ջերմության համար, որ տալիս եք մեզ ամեն օր, հաջողությամբ համատեղում մասնագիտական աճն ու աշխատանքը ընտանեկան օջախն ու ավանդույթները պահպանելու հետ: Ամենապատասխանատու դերերում նպաստում եք նաև մեր հայրենիքի առաջընթացին, մեզ դարձնում ավելի ուժեղ, վստահություն և ոգեշնչում տալով նոր ձեռքբերումների համար՝ կյանքը լցնում հույսով և ներդաշնակությամբ:

Մեր մարզում ևս ապրում ու արարում են հայրենասեր, նպատակալաց և տաղանդավոր կանայք, նրանք հսկայական ներդրում ունեն Սյունիքի զարգացման գործում թե՛ մասնագիտական գործունեությամբ, թե՛ հասարակական ակտիվությամբ: Շնորհակալություն եմ հայտնում այն ամենի համար, ինչ նրանք արել և շարունակում են անել. հիացմունքի է արժանի ծննդավայրին ձեր նվիրվածությունը:

Մարտի 8-ին չենք կարող չհիշել հայրենիքի համար իրենց կյանքը զոհած հայուհիներին, մեր խոնարհումը՝ նրանց հիշատակին... Մարտի 8-ին՝ ուժ և տոկունություն այն կանանց, որ հանուն մայր հողի հերոսացած որդուց, եղբորից, ամուսնուց, հորից շնորհավորանք չեն ստանալու... Համբերատարություն նաև նրանց, որ սպասում են այս պահին ծառայության մեջ գտնվող հարազատներին:

Եվս մեկ անգամ շնորհավո՛ր ձեր տոնը, սիրելի՛ կանայք ու աղջիկներ, թո՛ղ ձեր կյանքում միշտ ներկա լինեն ներդաշնակությունը, հաջողությունները, բարի իրադարձություններն ու գարունը: